Բովանդակություն

1.Ներածություն.....3
2.Դպրոցի առաքելությունը.....4
3.Դպրոցի բնութագիրը.....8
4.Իրավիճակի վերլուծություն.....11
5.Հիմնախնդիրներ.....17
6.Դպրոցի զարգացման ուղղությունները, ակնկալվող արդյունքները.....19
7.Նպատակ , խնդիրներ և ակնկալվող արդյունքներ, գործողություններ,
կատարողներ, ժամանակացույց..... 21
8.Ծրագրի ֆինանսավորման ապահովումը.....26
9.Դպրոցի զարգացման ծրագրի(ԴԶԾ)իրականացման ռիսկերը և դրանց
ազդեցությանն ուղղված գործողությունները.....27
10ԴԶԾ-ի գնահատման ցուցիչները, վերահսկողությունը.....28

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը՝ և՛ իրավունք և՛ պարտականություն է

Արդի աշխարհի սրընթաց զարգացումը հանգեցրել է փոփոխության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ նաև կրթության ոլորտում: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար (<<Կրթության մասին>> ՀՀ օրենք, հոդված 3.1): Ներկայումս ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն, հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների ուսուցումն ու դաստիարակումն է: Այս հարցում շարունակում է իր կարևոր դերն ունենալ դպրոցը: 21-րդ դարը ինֆորմացիայի և կիբեռգիտելիքների դար է, իսկ դա նշանակում է, որ կրթական համակարգը պետք է լուծի սկզբունքորեն նոր, գլոբալ խնդիր՝ նախապատրաստել սերունդներին կյանքի նոր պայմաններին ու գործունեությանը ինֆորմացիոն և մոբիլ աշխարհում: Հետևաբար, հասարակության զարգացման այս փուլում անհրաժեշտություն է առաջանում դպրոցում ստեղծել այնպիսի կրթական տարածք, որտեղ սովորողների մոտ կձևավորվեն 21-րդ դարի պահանջներին համապատասխան որակներ՝ գիտելիքներ, կարողունակություններ ու հմտություններ:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է: Այս ծրագիրը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի: Ծրագրի կազմման հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև հաշվի է առնվել Մեծ Այրում համայնքի առանձնահատկությունները:

2. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության ամբողջ նպատակը սովորողին երջանիկ և ուժեղ քաղաքացի դարձնելն է:

Պետական քաղաքականությունը նպաստում է, որ սովորողների մեծ մասը հնարավորություն ունենա շարունակել կրթությունը՝ ձգտի ստանալ միջին և բարձրագույն կրթություն: Հիմնական կրթությունից հետո կրթության համակարգը պետք է ապահովի կրթությունը շարունակելու բազմազան հնարավորություններ՝ կախված սովորողների մասնագիտական կողմնորոշվածության, նրանց հավակնությունների, ընդունակությունների և կարողունակությունների մակարդակից:

Միջնակարգ դպրոցի առաքելությունը կայանում է նրանում, որ այն կրթության ընդհանուր համակարգի մաս է՝ բոլոր բաղադրիչներով՝ կոչված ապահովելու ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը: Դպրոցը սովորողին պետք է սովորեցնի սովորել, ժամանակ տրամադրել անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը, ներդնի ու ամրապնդի հասարակության հետ հաղորդակցվելու մշակույթը, սովորեցնի ընտրել իր կարողունակություններին համահունչ մասնագիտություն, որը լինի պահանջարկված և ոչժամանակավրեպ: Դպրոցը սովորողին պետք է սովորեցնի սիրել մոլորակն ու տիեզերքը և այդ սիրով ապրել առողջ ու երջանիկ: Դպրոցը եղել և մնում է երեխային արժանապատիվ քաղաքացի դարձնելու փորձված ուղի, ուստի դպրոցը պետք է առաջընթաց ապրի, ճկուն լինի, կարողանա ճիշտ համադրել հինն ու նորը, լինի համոզիչ, վստահելի և ձգող:

3.ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մեծ Այրումի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1972թ.-ին երբ գյուղը ադրբեջանաբնակ էր: Դպրոցը տիպային է, բաղկացած է 3 երկհարկանի մասնաշենքերից:

1989թ.-ից դպրոցը դարձավ հայեցի առաջին տնօրենի՝ Է.Խաչատրյանի և փոխտնօրեն Է.Միրզոյանի ջանքերով: Այդ ժամանակ գործում էին երկու բաժիններ՝ հայկական և ռուսական (գյուղը վերաբնակեցվեց Ադրբեջանից գաղթած ռուսախոս հայերով): Դպրոցում սովորում էին ծուրջ 250 աշակերտներ: 1996թ.-ից ռուսական բաժինը փակվեց և դրա հետ կապված բազմաթիվ մասնագետներ և ընտանիքներ տեղափոխվեցին ՌԴ:

Դպրոցը գտնվում է հետևյալ հասցեում՝ ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծ Այրում , փողոց 6, շենք 115/1:

2003 թվականին դպրոցն անվանվել է <<ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ:

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանում գրանցումն արվել է 24.01.2003թ.-ին, գրանցման N 96.210.00657:

Դպրոցի կանոնադրության վերջին փոփոխությունը կատարվել և հաստատվել է 2020 թվականի հոկտեմբերիրի 20-ին թիվ 883-Ա որոշմամբ:

ՀՀ ԿԳՆ –ի կողմից հանրակրթական ծրագրի իրականացման լիցենզիան տրամադրվել է 05.12.2011թ.-ին:

Տարրական հանրակրթական - 100 սահմանային տեղով - Ա 0720

Հիմնական հանրակրթական - 125 սահմանային տեղով - Ա 0709

Մրջնակարգ հանրակրթական – 75 սահմանային տեղով - Ա 0591

Դպրոցին ամրագրված է 1.876 հա հողատարածք, որտեղ տեղակայված են 3 երկհարկանի մասնաշենքերը՝

նախատեսված 300 աշակերտների համար/տարրական հանրակրթական՝ 100 սահմանային տեղով, հիմնական հհանրակրթական՝ 125 սահմանային տեղով/, առկա են 18 դասասենյակներ, որոնցից այժմ(օգտագործվում են 15-ը), 3 լաբորատորիաներ, 2՝ առարկայական սենյակներ, մեկ ուսուցչանոց, 1 առանձնասենյակ: Դպրոցն ունի 1 արհեստանոց, «Համակարգչային» կաբինետ , ՆԶՊ-ի սենյակ, գրադարան, բուժկետ, 1 մարզադահլիճ, մարզահրապարակներ՝ 3, ճաշարան, 11 սանհանգույցներ/գործող 7-ը/, 2 հանդերձարան:

Դպրոցն աշխատում է միահերթ:

2022-2023 ուստարում Մեծ Այրումի միձնակարգ դպրոցում սովորողների փաստացի թիվն՝ ըստ դասարանների 15.093.2023թ. դրությամբ. կոմպլեկտավորվել է 12 դասարան,որտեղ սովորում են 107 աշակերտներ՝ տարրական դպրոցում 38 աշակերտ, հիմնականում՝ 49, միջնակարգում՝ 20:

Դպրոցում ներառական կրթությունն իրականացվում է 2018 թվականից, այժմ ունենք 16 ԿԱՊԿՈՒ սովորողներ/5 ծանր, 6 միջին, 5 թեթև/:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության բարելավմանը աջակցում են ուսուցչի օգնականը, հոգեբանը և դպրոցի բոլոր մանկավարժները: Դպրոցում աշխատում են 24 մանկավարժներ, բոլորն ունեն բարձրագույն կրթություն՝ բացառությամբ 2 մասնագետների, որոնք ունեն միջին մասնագիտական կրթություն, 2 վարչական աշխատող, 6 ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ:

Համագործակցում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ:

Դպրոցում կան ձևավորված խորհրդակցական հետևյալ մարմինները.

- Կառավարման խորհուրդ
- Մանկավարժական խորհուրդ

- Առարկայական մեթոդմիավորումներ(ՄՄ)՝
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ
- **Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ.**

Դպրոցը համագործակցում է ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, Լոռու մարզպետարանի, ԱԻՆ-ի, ոստիկանության, Ալավերդու համայնքապետարանի, ՊՀԾ ՀԴՍԾ-ի , Ախթալայի ԼՀԿ-ի հետ :

Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը.

Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, կանոնակարգվող իրավական ակտերը/ դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը/, դրանք վարվում են համապատասխան կարգերի պահանջներին:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնում ենք դպրոցի ներքին գնահատում, որը ֆինանսական եռամսյա ևտարեկան հաշվետվությունների հետ տեղադրվում է դպրոցի պաշտոնական կայքում՝ http://metsayrum.schoolsite.am/

Դպրոցի էլեկտրոնային հասցեն՝ metsayrum@yandex.com

4.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ոլորտը	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Վտանգներ, ռիսկեր
1.Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Դպրոցի շենքը տիպային է, տանիքը նորոգված: Ունի երեք երկհարկանի մասնաշենքեր, որոնք կապված են միմյանց: Արկա է սպորտդահլիճ, նորոգված և բոլոր պահանջներին համահունչ կահավորված ճաշարան, հանդիսությունների դահլիճ: Ունի համակարգչային սենյակ, նածատեսված են բնագիտական առարկաների համար սենյակներ; Առկա է թեքահարթակ: Ունի բացօդյա մարզահրապարակներ՝ մեծ և փոքր	Դպրոցի շենքային պայմանների հիմնանորոգման խնդիր: Առաջնահերթ դասասենյակների պատուհանների փոփոխուփյուն, որի հետ կապված է ջեռուցման նոր տեսակի կիրառումը Անհրաժեշտ ուսումնանյութական բազայի անբավարար ապահովվածությունը Ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը, Կա դասասենյակները և առարկայական կաբինետները համակարգիչներով համալրելու անհրաժեշտություն Տեխնոլոգիայի դասասենյակների՝ համապատասխան անհրաժեշտ գույքով ապահովելու խնդիր Որոշ սանհանգույցների զուգարանակոնքերի և ջրի ծորակների փոխարինում: Էլեկտրաէներգիայի և վառելիքի ծախսի նվազեցում շենքի տանիքում արևային վահանակների տեղադրման միջոցով, Նոր սերնդի համակարգիչների ձեռքբերում, առանձնասենյակներն ու համակարգչային սենյակը	Գազաֆիկացում	Ռեսուրսները ձեռք բերելու ֆինանսական ոչ բավարար միջոցներ՝քիմիա, մաթեմատիկա, ֆիզկուլտուրա, ՆԶՊ առարկաների համար: Ունեցած սարքավորումների սպասարկումը կազմակերպելու խոչընդոտներ՝ դրանք սարքին վիճակում պահելու և սպասարկելու հետ կապված:

		վերազինելու նպատակով: Լաբորատոր սարքերի ձեռքբերում քիմիայի , ֆիզիկայի , կենսաբանության առանձնասենյակներիհամար: Smart գրատախտակների ձեռքբերում :		
2.Դպրոցի ֆինանսական գործունեությունը	Պետության կողմից դպրոցի ֆինանսավորման ապահովում: Դպրոցի բյուջեի նախահաշիվ կազմելու և ըստ պլանավորվածի ծախսելու, հաշվետվություն կազմելու կարողություն:	Դպրոցը ֆինանսավորում է ստանում ըստ դասարանների քանակի և չունի սեփական եկամտի աղբյուր:	Առկա է բյուջեի հաշվետվողականություն ապահովելու և սեփական հավելյալ եկամուտ ստանալու հնարավորություն՝ ջեռուցումը փորձել կազմակերպել արևային էներգիայով:	Չպլանավորված ծախսերի առաջացում, սեփական եկամուտներ ստանալու դժվարություն:
3.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, դրանց վարումը	Դպրոցն ունի անհրաժեշտ բոլոր իրավական փաստաթղթերի ցանկին համապատասխան փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա կազմված և սահմանված կարգով հաստատված և վարվող իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:	Մանկավարժներն իրազեկված չեն անհրաժեշտ իրավական կարգերին և ամբողջովին չեն ուսումնասիրել պաշտոնային պարտականությունները :	ՄՄ նիստերում դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի իրազեկման հնարավութություն ՝ ուսուցչի որակավորման խթանում:	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի, դրանց վարման մեծ ծավալ, ուսուցիչների ծանրաբեռբվածություն
4.Կառավարման և խորհրդակցական մարմինները՝ 4.1Մանկավարժական	4.1Մանկավարժական խորհուրդի բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն/բացառությամբ 2-ի/ 4.2 Գումարվում են առարկայական ՄՄ կանոնավոր նիստեր	4.1Առարկայական դասալսումները չեն կատարվում բավարար չափով 4.2Ծնողական խորհրդի կողմից պասիվություն՝ երեխայի ուսուցման դաստիարակություն բաղադիչի իրագործման հարցում: 4.4Աշակերտական խորհուրդը կրում է ձևային բնույթ՝ դասղեկների հետ նրանց	4.1Մանկավարժական խորհուրդի բոլոր անդամները ՄՄ նիստերին առնչվող բոլոր իրավական ակտերի և փաստաթղթերի բովանդակությանը, ինչպես նաև	4.1Մանկավարժական խորհուրդի այնպիսի անդամներ, ովքեր խնդիրների լուծումը փնտրում են մանկխորհրդի շրջանակներից դուրս: 4.2 Մանկավարժների մոտ նորամուծությունների

խորհուրդ 4.2Առարկայական մեթոդմիավորում (ՄՄ) 4.3Ծնողական խորհուրդ 4.4Աշակերտական խորհուրդ	4.3Ծնողական խորհրդի անդամների կանոնավոր հաճախում ժողովներին և մասնակցություն նիստերին: 4.4Աշակերտական խորհուրդը առկա է ըստ կառուցվածքային սահմանված ձևաչափի, արվում են մշակութային բնույթի միջոցառումներ	կողմից համագործակցության նախաձեռնողականության պակասի առումով:	անհրաժեշտ կարգերին իրազեկվելու հնարավորություն: 4.2 Առարկայական դրվածքի, առաջավոր փորձի ուսումնասիրման հնարավորություն 4.3 Ծնողավարության ռազմավարություն մշակելու հնարավորություն: 4.4Աշակերտական խորհրդի կողմից համակարգային ուսումնասիրություններ իրականացնելու պատրաստակամություն:	նկատմամբ հետաքրքրության պակաս, որի արդյունքում առաջանում է նաև պլանավորված գործունեությունը իրագործելու անկարևորություն: 4.3Ծնողական խորհրդի անդամների լրացուցիչ ծանրաբեռնվածություն և վերապատրաստում՝ հանդիպումներ կազմակերպելու հարցում:
5.Աշակերտական համակազմը	Դպրոցը աշակերտների պարտադրված կոմպլեկտավորում է իրականացնում՝ կախված թվաքանակից: Այս պահին ունենք 12 դասարան՝ ամենափոքրը՝ 3 աշակերտով, ամենամեծը՝ 13 աշակերտով համալրված	Ունենք դասարաններ, որտեղ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների թիվը մեծ է: Ներառական աշակերտների մեծ թիվ	Դպրոցը ունի հոգեբան և ուսուցչի օգնական	Երեխաների կողմից որոշակի առարկաների ընտրության բացառում:
6.Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմը պարտաճանաչ է և աշխատում է ըստ առարկայական չափորոշիչների: Բոլոր ուսուցիչները	Դասի պլանավորումը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով, որից մեթոդական թերությունների արդյունքում պակասում է դասի արդյունավետությունը: Գնահատման թափանցիկությունը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով: Հատուկ մանկավարժի բացակայություն	Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը բարձրացնելու հնարավորություն վերապատրաստումների	Անհրաժեշտ վերջնարդյունքի հասնելու անհնարինություն ուսման նկատմամբ անտարբերության պատճառով

	մասնագետներ են:		և սեմինարների միջոցով	
7.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Դպրոցը խոշորացված համայնքում է: Համայնքի բոլոր դպրոցներում առկա են ռեսուրսներ և նրանց կողմից առկա է համագործակցելու պատրաստակամություն տարբեր միջոցառումների կազմակերպման ժամանակ՝ օլիմպիադաներ, սպորտային, մշակութային և ինտելեկտուալ մրցույթներ: Համայնքային կառույցների կողմից համագործակցելու պատրաստակամություն, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների համագործակցելու պատրաստակամություն	Համագործակցությունները դպրոցների հետ ունեն տարերային բնույթ և կարիք կա համակարգված ռազմավարությունների մշակման:	Առաջավոր փորձի փոխանակման նպատակով կապ և համագործակցություն համայնքի դպրոցների և կրթության կառավարման մարմինների հետ: Առկա է համագործակցությունների մատյանի ստեղծման և վարման հնարավորություն:	Ռազմավարությունների տարբերություն շահառու կամ գործընկեր կառույցների հետ:
8.Ուսումնական միջավայր	Դպրոցում առկա է ֆիզիկական և բարոյահոգեբանական նպաստավոր միջավայր ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար: Կարգապահությունը դպրոցում գտնվում է շատ բարձր մակարդակի վրա: Յուրաքանչյուր աշակերտի դարձվում է պատշաճ ուշադրություն՝ ըստ անհրաժեշտության	Դպրոցը ունի բուժկետ, չունի բուժքույր: Դիմում ենք համայնքը սպասարկող բուժքրոջ օգնությանը: Ջեռուցումը իրականացվում է էլ. էներգիայի և վառելափայտի վառարաններով:	Գազաֆիկացման հնարավորություն: Աշակերտական խորհրդի առաջարկությունները հաշվի առնելու հնարավորություն:	Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից դասալսումների և դրանց վերաբերյալ վերլուծությունների իրականացման և խնդիրների առաջացման ժամանակ արձագանքման միջոցառումների բացակայություն: Սեմինարների սակավություն
9.Կրթությ	Կրթական գործընթացում	Թեև առարկաների դասավանդման	Դպրոցը	Ուսուցիչների կողմից

ան որակը ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	հանձնարարությունները, կազմակերպական գործողությունները կատարվում են: Աշակերտների մոտ առկա են անհատական ձեռքբերումներ: Առկա է ԲՈՒՀ ընդունվողների տոկոսի աճ:	համար ըստ ուս.պլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, այնուամենայնիվ, աշակերտները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների:	հնարավորություն ունի դաստիարակչական աշխատանքներն իրականացնել ծնողների աջակցությամբ (քանի որ երեխաների դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները)՝ մշակելով դաստիարակության ռազմավարություն: Դպրոցը հնարավորություն կունենա սահմանելու ուսումնական գործընթացի նպատակները և խնդիրները, ճիշտ պլանավորի իր գործողությունները տարվա ընթացքում և դրան համապատասխան դասերը վերլուծվեն, իրականացվեն թերությունների քննարկում, վերացման ուղիների մշակում, ինչը կհանգեցնի ուսուցման որակի բարձրացմանը:	առարկայական դրվածքների և դասալսումների գործընթացներում դիմադրություն: Աշակերտների կողմից որոշակի անտարբերություն և ծուլություն
10.Տեխնոլոգիաները և	Առկա է ինֆորմատիկայի կահավորված կաբինետ, արմաթ լաբորատորիան	Նորարարական տեխնոլոգիաների կիրառումը հազվադեպ է ընթանում դասարանային դասապրոցեսում և	Դպրոցն ունի գիտամանկավարժական հետազոտություններ և	Պահանջվում է հավելյալ աշխատանք՝ սահմանված գործողությունների

նորարարությունները	գործում է SMART սենյակում 24 աշակերտների համար և ընթերցասրահ՝ համակարգիչի առկայությամբ: Դպրոցն ունի ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր, ուսուցչի օգնական, առկա է ինտերնետ կապ: Ելնելով արտակարգ իրավիճակի պայմաններում հեռավար ուսուցում կազմակերպելու հրամայականից՝ ուսուցիչների մոտ բարելավվել է տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքի հմտությունները: Դպրոցի երկու մասնագետներ համագործակցում են §Դասավանդի՛ր Հայաստա՜ն¦-ի հետ, իրականասնելով տարբեր միջոցառումներ	մեթոդական զինանոցում:	նորարարական ծրագրեր ներդնելու հնարավորություն՝ մասնավորապես ուսուցանող գնահատում իրականացնելու մշակույթի ձևավորում:	համակարգված կազմակերպում, և ժամանակային լրացուցիչ ռեսուրսներ և ջանքեր:

5.ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Կատարելով իրավիճակի վերլուծություն՝ կարելի է ամբողջացնել հետևյալ հիմնախնդիրները.

- ✓ Հիմնական մասնաշենքի վերանորոգում և կահավորում: Բակի տարածքի ապահով ցանցապատում :
- ✓ Առաջնահերթ հիմնական մասնաշենքի պատուհանների փոփոխություն
- ✓ Գազաֆիկացում, լոկալ ջեռուցման համակարգի տեղադրում:
- ✓ Սպորտդահլիճի հիմնանորոգում համապատասխան ժամանակակից գույքով համալրում:
- ✓ Սեփական եկամտի ստացման աղբյուրների համալրման կարիք:
- ✓ Անհրաժեշտ չափով մանկավարժների ոչ լիարժեք իրազեկվածություն բոլոր իրավական կարգերին:
- ✓ Մանկավարժական խորհուրդի այնպիսի անդամներ, ովքեր թերանում են պաշտոնային պարտականություններում և ովքեր խնդիրների լուծումը փնտրում են մանկխորհրդի շրջանակներից դուրս:
- ✓ Որոշ մանկավարժների մոտ նորամուծությունների նկատմամբ հետաքրքրության պակաս:
- ✓ Ծնողական խորհուրդի կողմից պասիվություն՝ երեխայի ուսուցման դաստիարակություն բաղադիչի իրագործման հարցում:
- ✓ Ծնողավարության մշակված ռազմավարության դանդաղ իրագործում:
- ✓ Աշակերտական խորհուրդը կրում է ձևային բնույթ, առկա է դասղեկների հետ նրանց կողմից համագործակցության նախաձեռնողականության պակաս:
- ✓ Երեխաների կողմից որոշակի առարկաների ընտրության բացառում:
- ✓ Դասի պլանավորումը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով, որից մեթոդական թերությունների արդյունքում պակասում է դասի արդյունավետությունը:
- ✓ Աջակցության ցանցի հետ համագործակցություններն ունեն տարերային բնույթ և կարիք կա համակարգված ռազմավարությունների մշակման:

- ✓ Գնահատման թափանցիկությունը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով:
- ✓ Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից դասալսումների և դրանց վերաբերյալ վերլուծությունների իրականացման և խնդիրների առաջացման ժամանակ արձագանքման միջոցառումների բացակայություն:
- ✓ Թեև առարկաների դասավանդման համար ըստ ուս.պլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, այնուամենայնիվ, աշակերտները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների:
- ✓ Նորարարական տեխնոլոգիաների կիրառումը ոչ բավարար չափով է դասարանային դասապրոցեսում և մեթոդական զինանոցում:

6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ուղղությունների սահմանումը, ըստ էության, հանդիսանում է դպրոցի հնգամյա զարգացման ռազմավարությունը, որը հիմք է դպրոցի առկա իրավիճակի վերլուծությունից բխող նպատակների և խնդիրների սահմանման համար: Ըստ այդմ, դպրոցի զարգացման ուղղությունները դիտարկելի է երկու տեսանկյունից՝

1. Հանրակրթական պետական ծրագրերով դպրոցի համար սահմանված նպատակների և խնդիրների իրականացման ուղղություններ,

2.Հանրակրթական այլընտրանքային ծրագրերով դպրոցի կողմից իրականացվող առանձին բովանդակային կրթական տեխնոլոգիաների և ուսուցումը կազմակերպելու նորարարական ծրագրավորված ուղղություններ:

Ըստ այդմ, Քարկոփի միջնակարգ դպրոցի զարգացման համար ռազմավարական են հետևյալ ուղղությունները՝

1. Մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումների կազմակերպում,
2. Սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կամ ծրագրերի կազմակերպում,
3. Սովորողների ուսուցման կազմակերպում,
4. Սովորողների դաստիարակության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,
5. Սովորողների հանգստի կազմակերպում,
6. Երկարօրյա ծառայության մատուցում

Համապատասխան վերոնշյալ ռազմավարական ուղղություններին ՝ ակնկալվող ընդհանուր արդյունքները հետևյալն են՝

1. Տրամադրվող կրթական ծառայությունները կլինեն ավելի որակյալ,

2. Ուսուցիչների տարակարգի ստացում կամ բարձրացում
3. Կավելանա առանձին աշակերտների մոտ գրանցվող հաջողությունների թիվը,
4. Կրթական միջավայրում կգերակշռի ուսուցիչների և սովորողների մոտիվացվածությունը,
5. Սովորողների մոտ կզարգանան սոցիալականացման և անձի զարգացման հմտությունները՝ գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:
6. Ուսումնառությունը կլինի ավելի մատչելի:

7. ՆՊԱՏԱԿ, ԽՆԴԻՐՆԵՐ և ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ՝ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նպատակ 2.	Խնդիրներ	Արդյունքներ	Գործողություններ	Կատարողներ	ժամանակացույց
Բարելավել կրթական միջավայրը	**1**.Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում: 2.Պահպանել առկա գույքը և գործարկել դպրոցում առկա շենքային ռեսուրսերն ամբողջապես 3.Ակտիվացնել ծնողական խորհուրդի գործունեությունը երեխայի ուսուցման դաստիարակություն բաղադիչի իրագործման հարցում: 4.Դարձնել աշակերտական խորհուրդը ոչ ձևային բնույթ կրող մարմին, 5.Ապահովել բոլոր առարկաների դասապրոցեսի կառավարելիությունը ուսուցիչների կողմից 6.Բարելավել շենքի և բակի վիճակը	**1.**Անհրաժեշտ գույքով ապահովվածություն **2.** Օգտվել առկա սարքավորումներից և գույքից **4.1**Աշակերտական խորհրդի կողմից փորձառության ավելացում և վստահություն, որ իրենց ներկայացրած խնդիրը կքննարկվի: **4.2** Ապահովել դասղեկների և աշակերտական խորհրդի միջև համագործակցություն: **5.** Կստեղծվի բոլոր աշակերտների համար նպաստավոր կրթական միջավայր 6. Ունենալ բարեկարգ շենք և բակ: :	**1** Ձեռք բերել լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր՝ դպրոցի շենքային պայմանները բարելավելու նպատակով, **2** Ֆիզկուլտուրայի համար անհրաժեշտ կահավորանք, **3**Արշավների կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ, **4.**Ավելացնել համակարգիչների քանակը **5.** Կարգի բերել դպրոցի բակը **6.** Հագեցնել ՆԶՊ –ի դասասենյակը **7.** Մշակել ծնողավարության ռազմավարության նոր մեխանիզմ: **8.** Ուսումնասիրել աշակերտներին անհանգստացնող խնդիրները	1.Տնօրեն 2.Ուսուցիչներ և աշակերտներ 3.Ծնողխորհուրդ, դասղեկներ 4.Տնօրեն 5. Տնօրեն, աշխորհրդի նախագահ և անդամներ 6.ՄՄ նախագահներ, զինղել 7. Տնօրեն, ծնողկոմիտե 8.Դասղեկներ, տնօրեն 9.Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄՄ նախագահներ 10. Տնօրենի	1.Շարունակական 2. Շարունակական 3. Տարեկան երկու հանդիպում 4. Յուրաքանչյուր ետարի մեկ անգամ 5.Յուրաքանչյուր ամիս 6. Շարունակական 7. Առաջին տարվա ընթացքում 8.Շարունակական 9.Շարունակական 10. Սեպտեմբեր, հունվար 11.Շարունակական

			9. Դասալսումներ և դրանց վերլուծություն **10.** Ուսուցիչների և աշակերտների օրական և շաբաթական ծանրաբեռնվածության համամասնական բաշխում: **11.**Կանխել բոլոր հնարավոր խնդիրները, որոնք կարող են հանդիսանալ աշակերտների տեղափոխման պատճառ:	տեղակալ 11. Տնօրեն, ուսուցիչներ	

Նպատակ 2.	Խնդիրներ	Արդյունքներ	Գործողություններ	Կատարողներ	Ժամանակացույց
Բարելավել կրթության որակը	**1.**Հասկանալ նորարարական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները դասապրոցեսում **2.**Տնօրենի կողմից դասալսումների և դրանց վերաբերյալ վերլուծությունների իրականացում **3.**Ուսումնասիրել դասապրոցեսում արդյունավետությունը այն առարկաների դասավանդման համար, որոնք ըստ ուս.պլանի ժամաքանակների բավարար են առարկայի յուրացման համար **4.**Ապահովել սովորողների ուսուցման պատշաճ կազմակերպումը **6.**Խթանել արտադպրոցական դաստիարակության կազմակերպմանը	**1.** Կրթությունը կլինի ժամանակակից կրթական պահանջներին համահունչ **2.**Կբարձրանա դասի արդյունավետությունը ուսուցչի կողմից: **3.**Աշակերտների կրթական կարիքի բավարարումը կամբողջականանա դպրոցում՝ կրկնուսույցի օղակ: **4.** Չի լինի երեխաների կողմից որոշակի առարկաների ընտրության բացառում և /կամ ուսուցիչների կողմից առարկաների ուղղորդումը **5.** Ունենալ միահամակազմ դասարաններ: **6.**սովորողները կունենան անհատական զարգացում՝ըստ իրենց նախասիրությունների և ընդունակությունների	**1.**Կազմակերպել դասապրոցեսը նորարարական տեխնոլոգիաներով **2.**Ուսուցչի կողմից անհրաժեշտ ձևով կատարել դասի պլանավորում, փոխադարձ դասալսումների իրականացում **3.**Անանուն հարցաշարերի տրամադրում աշակերտներին, ուսուցիչների կողմից ներկայացված խնդիրների քննարկում: **4.**Ուսումնասիրել առարկաների ընտրության գործընթացը և երեխաների հիմնավորումները **5.Գտնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ** **6.** Խմբակների և բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում	**1.**Օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ **2.** Տնօրեն, ՄՄ նախագահներ, մանկավարժներ **3.**Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսուցչի օգնական, , դասղեկներ **4.** Տնօրեն, տնօրենի տեղակալ **5.** Տնօրեն **6.**Տնօրեն, ՄՄ նախագահներ, մանկավարժներ	**1, 2, 3-** Շարունակական **4.**Սեպտեմբեր, հունվար **5.** Սեպտեմբեր **6.**Կախված կլինի բնագավառներից

Նպատակ 3.	Խնդիրներ	Արդյունքներ	Գործողություններ	Կատարողներ	ժամանակացույց
	1.Ապահովել մանկավարժների իրազեկվածությունը բոլոր իրավական կարգերին: **2.**Մանկավարժական խորհուրդի անդամների կողմից պաշտոնային պարտականությունների կատարման ապահովում: **3.**Ստեղծել առարկայական դրվածքի մշակույթ: **4.**Ավելացնել մանկավարժների մոտ նորամուծությունների նկատմամբ հետաքրքրությունը: **5.**Գնահատման թափանցիկությունը կարևորել անհրաժեշտ չափով: 6. Ուսուցիչների մասնակցություն կամավոր ատեստացիայի:	**1.1**Մանկավարժները պատրաստ կլինեն տարբեր սեմինարներ վարելուն, տարակարգ ստանալուն **1.2** Որոշ ուսուցիչների կողմից կբացառվի իրենց առարկաների ընտրության ուղղորդումը: **2.1**Առաջացող բոլոր խնդիրների լուծում մանկխորհրդի շրջանակներում **2.2** խնդիրների առաջացման ժամանակ արձագանքման միջոցառումների իրականացում **3.**Տարակարգերի ստացում **4.**Կհամալրվի մեթոդական զինանոցը **5.**Աշակերտների մոտ թերարժեքության և գերարժեքության բարդույթներ չեն առաջանա և կառաջանա վստահություն ուսուցիչների հանդեպ, մասնագիտական կողմնորոշման համար աշակերտի	**1.**Իրազեկման միջոցառումների իրականացում **2.**Պաշտոնային պարտականությունների իրազեկում և վերահսկողություն **3.1**Իրականացնել առարկայական մշտական դասալսումներ **3.2**Հանձնարարականների և կազմակերպական գործողությունների իրականացման համար ստեղծել մանկավարժների աշխատանքի կազմակերպման սահմանված հստակ մեխանիզմ, կատարել վերլուծության աշխատանք և մշակել ուղղման գործողությունների տարբերակներ **4.**Վերապատրաստումների իրականացում **5.** Սահմանել գնահատման չափորոշիչների հստակություն և թափանցիկություն, աշակերտի ինքնագնահատման գործիքի կազմում: 6. Խրախուսել կամավոր ատեստացիային մասնակցություն:	**1.**ՄՄ նախագահներ **2.**Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄՄ նախագահներ **3.** Կրթական գործընթացում ուսումնական մասի պատասխանատու **4.** Կախված է թեմայից **5.**Մանկավարժներ,	**1.**Յուրաքանչյուր եռամսյակը մեկ **2.**Շարունակական **3.**2023-2024 ուս. Տարի **4.**Ըստ ՄՄ պլանի **5.** Շարունակական 6. Շարունակական

		ինքնագնահատում: 6. Ունենալ անհրաժեշտ գիտելիքներով զինված ուսուցիչներ:		աշակերտներ 6. Ուսուցիչներ	



8.ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեի հատկացումներից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: Ելնելով ՀՀ կառավարության՝ 25 հուլիսի 2002 թվականի N1392-Ն որոշմամբ <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպություններին թույլատրված ձեռնարկատիրական գործունեության տեսակներից՝ դպրոցը կարող է զբաղվել գործունեության հետևյալ տեսակներով՝

- ✓ Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում՝ մասնավոր օրինակ՝Ձեռնարկատիրություն,
- ✓ Ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում՝ ինտենսիվ այգի,ջերմոցի ռեսուրս,
- ✓ Սովորողների սննդի կազմակերպում,երկարօրյա ծառայության մատուցում

- ✓ Արևային էներգիայի ստացում՝ օգտագործելով դպրոցի տանիքի ազատ մակերևույթի մակերեսը:

9.Դպրոցի զարգացման ծրագրի (ԴԶԾ) իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

N	Ռիսկերը	Ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
1.	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մոտվիվացիոն համալիր միջոցառումների իրականացում, Մասնագիտական վերապատրաստումներ, առաջավոր փորձի փոխանակում
2.	Դպրոցի սահմանափակ ֆինանսական հնարավորություններ	ֆինանսավորման այլընտրանքային համակարգի մշակում
3.	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Ծնողավարության ռազմավարության նոր մոտեցումների մշակում
4.	Դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարություն	Ապահովել գործունեության թափանցիկություն՝ մշակելով հաշվետվողականության մեխանիզմներ, ինչը կարող է նպաստել նոր ներդրումների իրականացմանը
5	Մասնագիտական կողմնորոշման գործընթացի կազմակերպման բացեր	Իրազեկման միջոցառումներ

10.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԴԶԾ-ի գնահատման չափանիշները նախատեսում են գնահատում՝ ըստ կրթության համակարգային ցուցանիշների և ըստ դպրոցի գործունեության բոլոր ոլորտների՝ հնգամյա ծրագրին համապատասխան:

Առանձնացնում են կրթության համակարգային ցուցանիշների չորս հիմնական դասակարգում:

1. ընդհանուր (ոչ ֆինանսական)
2. ֆինանսական ցուցանիշներ
3. պարզ և բարդ ցուցանիշներ
4. ուղղակի և ոչ ուղղակի ցուցանիշներ

Պարզ ցուցանիշները բացահայտում և բնութագրում են դպրոցի գործունեության միայն մեկ բաղադրիչը՝տվյալ պահին կամ որոշակի ընտրված ժամանակահատվածում, արտահայտվում են թվերով կամ տոկոսներով:

Բարդ ցուցանիշները արտահայտում են կրթական համակարգի մեկ բաղադրիչի փոխհարաբերությունը մեկ այլ բաղադիչի նկատմամբ, դրանք հաշվարկվում են առնվազն երկու տիպի պարզ ցուցանիշների համադրումից:

Ուղղակի ցուցանիշները վերաբերում են այնպիսի գործոնների, որոնք ուղղակիորեն կապված են դպրոցի հետ: Ոչ ուղղակի ցուցանիշները վերաբերում են այնպիսի գործոնների, որոնք ուղղակիորեն կապված չեն դպրոցի հետ, բայց անուղղակիորեն ազդում են ուսումնական գործընթացի վրա: Դրանք սոցիալական և տնտեսական գործոններն են, օրինակ ուսուցիչների և աշակերտների համար բժշկական ծառայությունների մատչելիությունը, լավ ճանապարհների առկայությունը, տրանսպորտային միջոցների առկայությունը, դպրոցի հեռավորությունը տնից և այլն:

Ընդհանուր ցուցանիշները՝ ըստ պարզ և բարդ ցուցանիշների տեսակների

<u>Ընդհանուր պարզ ցուցանիշներ՝</u>

1.Դպրոցի նախագծային հզորությունը՝ 300:

2.Փաստացի սովորողների և դասարանների թվերը՝12 դասարան 107 աշակերտ

3. Աշխատողների թիվը, այդ թվում՝ մանկավարժների թիվը՝ 24, և ոչ մանկավարժական աշխատողների թիվը՝6 է:

Ընդհանուր բարդ ցուցանիշներ

Դպրոցի ծանրաբեռնվածությունը / թերբեռնվածությունը սովորողներով՝ 193

Դպրոցի 1-12-րդ դասարանների միջին խտությունը՝ 8.9

Դպրոցի 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը 4.46 է:

Դպրոցի 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը 17.8 է:

Դպրոցի գործունեության ոլորտներն են՝

- Ուսումնական ֆիզիկական միջավայրի գնահատում՝ դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա,
- Ուսումնական սոցիալական միջավայրի գնահատում՝մանկավարժներ, սպասարկող և տեխնիկական կազմ, աշակերտներ, ծնողական համայնք,
- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն,
- Կառավարման և խորհրդակցական մարմիններ,
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր՝ դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը,
- Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ,
- Կրթության որակ՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների,
- Տեխնոլոգիաներ և նորարարություններ:

Մեծ Այրումի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության միջոցը կլինի հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականների վերլուծությունը՝ ըստ վերոնշյալ չափանիշների:

Այդ նպատակով լրացուցիչ կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

1. Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված ԴԶԾ դրույթների կատարողականների, հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:
2. Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:
3. Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ ԴԶԾ-ի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:
4. Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից ԴԶԾ-ի արդյունքների գնահատմանը: